ՏԱՐՈՆԸ ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(IX դարի երկրորդ կես—X դար)

Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականության հիմնակետերից մեկը Արևելքում դարեր շարունակ եղել է Տարոնը։ Կայսրությունը, տիրելով Տարոնին, ստրատեգիական մեծ առավելություններ էր ստանում[1]։ *IX դարի վերջին տասնամյակներից այդ քաղաքականությանը նպաստում էին Տարոնի Բագրատունիների մի ճյուղի կենտրոնախույս ձգտումները և Տարոնի ներսում Բագրատունիների ու Մամիկոնյաններ-Թոռնիկյանների միջև աստիճանաբար խորացող ֆեոդալական երկպառակությունը, որում պակաս չէր նաև կայսրության խաղացած դերը։*

Աշոտ Մսակերի օրոք Հայաստանի մի շարք գավառներ, այդ թվում և Տարոնը, անցան Բագրատունիներին։ Նրան Տարոնում հաջորդում է որդին՝ Բագարատ Բագրատունին։ Հնարավոր է, որ 850-ական թթ. Բագրատունիների համար ստեղծված ծանր իրավիճակում, ժամանակին Սասունում պատսպարված Մամիկոնյան-Թոռնիկյաններից ոմանք[2] *ակտիվացած լինեին Տարոնի՝ իրենց նախկին կալվածքների մի մասում։ Բուղայի կողմից Բաղդադ գերեվարված այլ իշխանների հետ Հայաստան վերադառնալուց հետո Բագարատի որդիներից Աշոտը դառնում է Տարոնի զգալի մասի գահերեց իշխանը, կյուրապաղատ տիտղոսով։ Տարոնի համար բարդ ժամանակաշրջանում Աշոտին կյուրապաղատի տիտղոս շնորհելու փաստից երևում է, որ կայսրությունը քայլեր էր ձեռնարկում Տարոնը իր ազդեցության ոլորտը գցելու նպատակով*[3],

---

[1] *Տարոնի գրաված դիրքի կարևորության մասին տե՛ս նաև* A. Toynbee, Constantine Porphyrogenitus and His World, London, 1973, *էջ 408։*

[2] *Վասպուրականի իշխաններից Գուրգեն Ապուսալիմը, որը, ինչպես երևում է Թովմա Արծրունու հաղորդումից («ի հօրէ զՍենեքերիմայն և ի մօրէ զՄամիկոնեացն»), ազգակցական կապի մեջ էր Մամիկոնյանների հետ, պետք է ապաստաներ նշված Մամիկոնյաններ-Թոռնիկյանների մոտ. նա այնուհետև «փութացաւ ի կողմանցն Տարունոյ» («Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 192, 207)։ Հետաքրքիր է նշել, որ դրանից մի քանի տարի առաջ Գուրգեն Ապուսալիմը պատսպարվել էր Մամիկոնյանների մյուս ճյուղի մոտ. «Իբրև եմուտ Բուխայ յաշխարհս Վասպուրական՝ ել փնտաց Գուրգէն առ Քուրդիկ Մամիկոնէից տէր ի Բագրևանդ գաւառ, և անդ լինէր, զի էր Քուրդիկ քեռի Գուրգինայս (նույն տեղում, էջ 194)։*

[3] *Այդ քաղաքականության արտահայտումը նկատվում է նաև Փոտ պատրիարքի (858—867 և 878—886) նամակներից մեկում։ Այնտեղ նա, հաղորդելով, որ երկրորդ նամակը ուղարկված է Զաքարիա կաթողիկոսին (855—876) և քաղկեդոնական հայերին, ցանկություն է հայտնում խոսել Չորրորդ Հայքում բնակվող «տարոնացիների» մասին («η προς τον θεοφιλεστατον και οσιωτατον αδελφον και συλλειτουργον ημων Ζαχαριαν και Αρμενιων τους ορθοδοξηκοντας δευτερα παλιν σταλεισα επιστολη—τους κατοικουντας την τεταρτην Αρμενιαν Ταρωνιτας διοα σε μη αγνοειν οτι λεγω...»), որից, սակայն, չի հետևում, թե այս ժամանակ Տարոնը ընդգրկվել էր քաղկեդոնականության ոլորտը։ Այս տեսանկյունից, առնվազն Տարոնի կապակցությամբ,*

չնայած որ կայսրության տիրապետությունը դեռևս չէր տարածվել Եփրատից արևելք։

Աշոտ կյուրապաղատի իշխանության տարիները, ինչպես և կարելի էր սպասել, հարթ ու խաղաղ չեղան։ Վիճակը բարդանում էր նրանով, որ Վասպուրականի իշխան Դերենիկ Արծրունին իր փեսային՝ Դավթին, որը Աշոտ կյուրապաղատի եղբայրն էր, ցանկանում էր տեսնել Տարոնի Բագրատունիների իշխանության գլուխ[3]։ Ըստ երևույթին, այս խառը իրավիճակում էր, որ Աշոտը փորձել էր ապավինել Բյուզանդիայի հովանավորությանը, սակայն այդ նրան չփրկեց և իշխանությունը անցավ եղբորը՝ Դավթին։ Վերջինիս հաջորդում է Աշոտ կյուրապաղատի որդին՝ Գուրգենը[5], որի իշխանությունը, ինչպես երևում է Թովմա Արծրունու մի հաղորդումից [«Մեռաւ արքայն (Դավիթը—Է. Դ.) իշխան Տարունոյ, և բռնաղբօսեալ զաշխարհն Ահմատ... յինքն նուաճել, և սպանանի Գուրգէն իշխան որդի կորապաղատին (Աշոտի—Է. Դ.)»][6], կարճատև եղավ։

Թովմա Արծրունին շարունակում է. «Գրէ բազում անգամ Սմբատ առ Ահմատ՝ թողուլ անդրէն զաշխարհն, ուրալ ի ձեռս Աշոտի որդւոյ իշխանին Դաւթայ...։ Բայց Ահմատ ոչ խոնարհեալ ունկն դնել ասացելոցն, արհամարհեալ զառաքեցելովքն»[7]։ Ի պատասխան դրա հայոց թագավոր Սմբատ I-ը (890—913) մեծ զորքի գլուխ անցած արշավում է Ահմադի դեմ, սակայն պարտվում է[8]։

Բյուզանդիան X դարի սկզբներին ավելի է ակտիվացնում իր գործողությունները Արևելքում և հատկապես Հայաստանում։ Սմբատ I-ի և Լևոն VI (886—912) կայսեր համագործակցությունը 901—902 թթ. արգասավոր է լինում արաբների դեմ մղված պայքարում[9]։ Այս ժամանակամիջոցում Տարոնից վտարվել էին օտար նվաճողները։ Սակայն Տարոնի Բագրատունիների տարբեր ճյուղերի միջև ծագել էր ֆեոդալական պատերազմ, որի ժամանակ Գրիգոր Տարոնացին հաղթում է Դավթի որդիներին։

Ինչպես հայտնի է, Աշոտ Մսակերի Սմբատ խոստովանող և Բագարատ[10] որդիներից էին սերում Շիրակի և Տարոնի Բագրատունիները, ուստի Ծիրանածինը, ինչ-որ չափով իմանալով նրանց միջև եղած ազգակցական կապի

ուշագրավ է նամակները հրապարակող Դարուզեի այն միտքը, որ տարոնացիները չէին տարբերվում մյուս հայերից այն ձևով, ինչպես նշում է Փոտը (J. Darrouzès, Deux lettres inédites de Photius aux Arméniens, „Revue des Études Byzantines", t. XXIX, Paris, 1971, էջ 139, 147)։ Իսկ Չորրորդ Հայքում կարող էին լինել Տարոնից հեռացած անձինք։

4 Թովմա Արծրունի, էջ 220։

5 Ա. Տեր-Ղևոնդյանը այս Գուրգենին նշում է որպես Դավթի եղբայր (А. Тер-Гевондян, Армения и арабский халифат, Ереван, 1977, էջ 242), այնինչ նա վերջինիս եղբորորդին էր։

6 Թովմա Արծրունի, էջ 231։

7 Նույն տեղում, էջ 236։

8 Նույն տեղում, էջ 237։

9 Տե՛ս մեր՝ «Բյուզանդական արշավանքները Հայաստան (X դ. առաջին քառորդ)», ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (Հաս. գիտ.), 1977, № 2, էջ 74—75։ Նաև՝ «Մանազկերտը բյուզանդա-արաբական հակամարտության ոլորտում (IX դարի երկրորդ կես—X դար)», «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 1, էջ 158—159։

10 Յ. Մարկվարտ, Հայ Բագրատունյաց ճյուղագրությունը, Վիեննա, 1913, էջ 63—67։ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Երևան, 1942, էջ 184, հատ. Գ, էջ 147, 545—547։

մասին, գրում է. «Իշխանաց իշխան Սմբատը (Սմբատ Ի՝ Սմբատ Խոստովանողի թոռը—է. Դ.) նամակ գրեց և խնդրեց նույն ամենաերանելի կայսեր (Լևոն VI—է. Դ.), որ նա մարդ ուղարկի Տարոնացու (Գրիգոր—է. Դ.) մոտ ազատելու համար իր, Սմբատի հարազատ եղբորորդիներին[11], վերոհիշյալ Արքայիկի[12] որդիներին, որպեսզի նրանք չհանձնվեն ամերմումնիի ձեռքը, որովհետև պատրիկ Գրիգորը իշխանաց իշխան Սմբատի ազգականն էր»[13]։

Ն. Ադոնցը, հիմնվելով Ասողիկի մի հաղորդման վրա[14], Գրիգորին համարում է սերված Բագարատ Բագրատունու երրորդ որդուց[15]։ Թերևս այս հաստատվում է նրանով, որ Ծիրանածինը «Արքայիկի» որդիներին նշում է որպես Գրիգորի հորեղբորորդիներ[16]։ Սակայն հնարավոր չէ ասել, թե Գրիգորի հոր անունը եղել է Թորնիկ, ինչպես ենթադրում է Ն. Ադոնցը[17]։

Կայսրը երկդիմի քաղաքականություն էր վարում հայոց թագավորի և հայ իշխանների նկատմամբ։ Ինչպես տեսնում ենք, Սմբատ I-ը դիմում է Լևոն VI-ին, որի միջամտությամբ Գրիգոր Տարոնացին դերիներին ազատելով,

---

11 Ջենքինսը նույնպես թարգմանում է «nephews»—«եղբորորդիներ» (տե՛ս Constantine Porphyrogenitus, De Administrando Imperio, Greek text ed. by Gy. Moravcsik, English transl. by R. J. H. Jenkins, Budapest, 1949, էջ 191, այսուհետև՝ D. A. I.)։ Բնագրի „τους ὀικείους ἀνεψιους" արտահայտությունը կարող է թարգմանվել նաև «հարազատ հորեղբորորդիներ» (ἀνεψιος, անգլ. cousin, տե՛ս Greek-English Lexicon, compiled by G. Liddel and R. Scott, Oxford, 1951, vol. I, էջ 137, այսուհետև՝ GEL)։ Հայտնի է, որ Սմբատ I-ը Դավթի որդի Աշոտի ո՛չ հորեղբայրն էր, ո՛չ էլ նրանք հորեղբորորդիներ էին։

12 Մարկվարտը (J. Markwart, Sudarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 324, 463) և Ադոնցը (N. Adontz, Les Taronites en Arménie et a Byzance, „Études Arméno-Byzantines", Lisbonne, 1945, էջ 204) գտնում են, որ Ծիրանածինը «Արքայիկ» ասելով նկատի է ունեցել Դավթին։

13 D. A. I., 43. 30—35։ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Կոստանդին Ծիրանածին», թարգմ. բնագրից, առաջաբան և ծան. Հ. Բարթիկյանի, էջ 5 (այսուհետև՝ Կոստանդին Ծիրանածին)։

14 «Նաեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 107։

15 N. Adontz, նշվ. աշխ., էջ 214։ Հմմտ. J. Markwart, նշվ. աշխ., էջ 324։ Հետևելով Մ. Չամչյանին («Պատմություն հայոց», հատ. Բ, Վենետիկ, 1785, էջ 725—726), որը աղբյուրը չի նշում, Հ. Աճառյանը Դավթի որդի Աշոտից հետո Տարոնի իշխան է համարում Դավթի մյուս՝ Վահան անունով որդուն, որից, ըստ նրանց, սերում էր Գրիգորը («Անձնանունների բառարան», հատ. Ե, էջ 16)։ Բացի այլ հանգամանքներից, չէ՞ որ Դավթի ճյուղը հարում էր Շիրակի Բագրատունիներին, իսկ ինչպես երևում է, Գրիգորը կենտրոնախույս տրամադրություն էր ցուցաբերել։ Ն. Ակինյանը («Մատենագրական հետազոտություններ», հատ. Դ, Վիեննա, 1938, էջ 80) և Հ. Բարթիկյանը (Կոստանդին Ծիրանածին, էջ 210, ծան. 3) հայտնել են այլ կարծիքներ։

16 D. A. I., 43. 27—29։ Ծիրանածինի բնագրի „ἀνεψιους" բառի առաջին նշանակությունն է „cousin-german"—«հորեղբորորդի» (GEL, vol. I, էջ 581) և հենց այդպես են թարգմանում Գ. Լասկինը («двоюродные братья», տե՛ս «Сочинение Константина Багрянородного «О фемах» и «О народах» с предисл. Г. Ласкина, М., 1897, էջ 155) և Ջենքինսը (D. A. I., էջ 189)։ Ռենսիմենը Թովմայի հաղորդումից [«Թողեալ (Դավիթը—է. Դ.) զաւակ իւր Աշոտ անուն», էջ 221] եզրակացնում է, որ Աշոտը Դավթի միակ զավակն էր, և դրանից հետևեցնում է, որ Արքայիկը՝ Աշոտն էր, իսկ Գրիգորը գերի էր վերցրել նրա երկու որդիներին (Ռենսիմենի կարծիքը բերում ենք ըստ Հ. Բարթիկյանի, տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 212)։ Թովման կարող էր միայն Աշոտին իմանալ, որպես իշխանության ժառանգորդ։ Կարծում ենք նաև, որ Գրիգորը կռվում էր Դավթի որդիների, այլ ոչ թե թոռների հետ, որոնք կարող էին դեռևս երեխաներ լինել։

17 N. Adontz, նշվ. աշխ., էջ 231, 242։

վտարում է երկրից։ Ժամանելով կայսեր մոտ[18] Կոստանդնուպոլիս, Դավթի որդի Աշոտը (ամենայն հավանականությամբ՝ ընտանիքով) և նրա եղբայրը, ինչպես երևում է, այլևս Տարոն չէին վերադարձել։

Այս իրավիճակում, չնայած Սմբատի հետ ունեցած համագործակցությանը, կայսրությանը ձեռնտու էր, որ Տարոնից հեռացվեին և փաստորեն Բյուզանդիա պատանդ տարվեին Բագրատունի այն իշխանները, որոնք ձգտում էին միավորվել Շիրակի Բագրատունիների հետ։ Այն, որ Տարոնի Բագրատունիներից Դավթի ճյուղը ցանկանում էր սերտ կապերի մեջ լինել Շիրակի Բագրատունիների հետ, երևում է նաև Դավթի որդու՝ Աշոտի ամուսնությունից Սմբատ I Բագրատունու եղբոր՝ Շապուհի դստեր հետ[19]։

Տարոնի ներսում ծագած պատերազմից հետո Տարոնի Բագրատունիների տիրույթներին իշխելու իրավունքն անցավ Գրիգորին, որը «առաջինը ենթարկվեց հռոմեացիների կայսրին»[20]։

Այս ժամանակ կայսրությունը, այնուամենայնիվ, չհասավ իր նպատակին։ Գրիգորը, ինչպես նշում է Ծիրանածինը, «երկու լարի վրա էր խաղում, խոսքով ձևացնում էր, թե գնահատում է կայսեր բարեկամությունը, բայց իրականում աշխատում էր հաճոյանալ սարակինոսների առաջնորդին» և այլն[21]։ Եվ այստեղ է, որ կայսրությունը նոր ծրագրեր է մշակում, փորձելով Տարոնի Բագրատունիներին հակադրել վերոհիշյալ Մամիկոնյաններ-Թոռնիկյաններին։

Ծիրանածինից իմանում ենք, որ Գրիգորը երկու որդի ուներ՝ Բագրատ և Աշոտ (խորթ որդի)[22]։ Իսկ Ծիրանածինի հաղորդումը այն մասին, թե Գրիգոր Տարոնացին և Ապոգանեմը եղբայրներ էին[23], համոզիչ չի թվում, չնայած նա բազմիցս սրանց որդիներին նշում է որպես հորեղբորորդիներ։ Որ Գրիգոր Տարոնացին և նրա ժառանգները Բագրատունի էին, դա կասկած չի թողնում և նրանց անուններն էլ մինչև վերջինը այդ տանը բնորոշ էին։ Իսկ Ապոգանեմը, նրա որդի Թոռնիկը և նրանց ազգականները, ինչպես նշել ենք[24] և ստորև կհամոզվենք, Տարոն—Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանների ճյուղին էին պատկանում, որոնք աստիճանաբար պետք է ակտիվացած լինեին նաև կայսրության միջամտությամբ։ Այդ են վկայում Ծիրանածինի հաղորդումները։ Գրիգորի որդի Աշոտից հետո (որը պրոտոսպաթարի աստիճան ստացավ) Բյուզանդիա է գնում Ապոգանեմը, որին կայսրը նույնպես շնորհում է պրոտոսպաթարի աստիճան։ Դրանից հետո Կոստանդնուպոլիս է գնում Գրիգորը, որտեղ նա ստանում է մագիստրոսի կոչում և զորավարի աստիճան։ Իսկ երկրորդ անգամ Ապոգանեմը Բյուզանդիայից ետ է վերադառնում պատրիկի կոչում ստացած[25]։

Կոստանդնուպոլիս ժամանող Տարոնի այդ իշխանները, ինչպես նաև

---

18 D. A. I., 43. 56—57.

19 «Յովհաննու Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 174։

20 D. A. I., 43. 7—8.

21 Նույն տեղում, 43. 9—26։ Կոստանդին Ծիրանածին, էջ 4—5։

22 D. A. I., 43. 51, 164—165.

23 D. A. I., 43. 55—56, 100—101 և հտ.։

24 Տե՛ս մեր «Թոռնիկյանների քաղաքական դերը X դ. հայ-բյուզանդական հարաբերություններում» հոդվածը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1977, № 10, էջ 68։

25 D. A. I., 43. 51—73.

նրանց որդիները, տարբեր «պատիվներ» ստանալով, փաստորեն, ավելի էին հակադրվում մեկը մյուսին։ Այս ժամանակաշրջանի Տարոնի պատմությունը Բյուզանդիայի վարած «բաժանիր և տիրիր» քաղաքականության վառ օրինակներից է։

Կայսրությունը, շարժվելով արևելք, որքան մոտենում էր Տարոնի սահմաններին[26], այնքան երկպառակությունը Տարոնի Բագրատունիների և Մամիկոնյաններ-Թոռնիկյանների[27] միջև խորանում էր։

Ծիրանածինի հաղորդումներից իմանում ենք, որ կայսրությունը շահագրգռված էր իրավականորեն հիմնավորել իր պահանջները Տարոնի նկատմամբ, շեշտը դնելով տեղի իշխանների թողած կտակների վրա։ Ծիրանածինը գրում է, որ Գրիգոր Տարոնացու որդին՝ Բագրատը «ամուսնությունից հետո կտակ գրեց, որտեղ հայտնում էր, թե «եթե այս կնոջից (բյուզանդական մագիստրոս Թեոփիլակտոսի քույրը—է. Դ.) երեխաներ ծնվեն, թող նրանք տիրեն իմ ամբողջ երկրին, որպես [իրենց] հայրենական ժառանգություն...»։ Ապոգանեմի որդի Թոռնիկը «նամակ գրեց կայսեր (Ռոմանոս I—է. Դ.), խնդրելով, որ վերջինս վստահելի մարդ ուղարկի և վերցնի իր երկիրը, իսկ իրեն, իր կնոջը և երեխային թույլ տա լինել կայսեր մոտ։ ...Երբ Կրինիտեսը այդ երկիրը հասավ [Թոռնիկն] արդեն վախճանված էր, իր մահից առաջ կտակ թողնելով, համաձայն որի, իր ամբողջ երկիրը կտակում էր հռոմայեցիների կայսեր. նա [խնդրում] էր նաև, որ իր կինն ու երեխան լինեն կայսեր մոտ։ Կայսրը [Թոռնիկի կնոջ] իր մոտ լինելուց հետո, նրա բնակության համար հատկացրեց ժամանակին Խաղտիքի կոմմերկիարիոս դարձած պրոտոսպաթար Միքայելին պատկանող Պսոմաթեոսի վանքը։ Ահա վերոհիշյալ Կրինիտեսը կայսեր կողմից նորից է ուղարկվում ստանալու Ապոգանեմի երկիրը, այսինքն պատրիկ Թոռնիկի բաժինը։ Տարոնացու որդիները (Բագրատը և Աշոտը—է. Դ), այսինքն վախճանված [Թոռնիկի] հորեղբորորդիները, դիմեցին [կայսեր], առաջարկելով նրան զիջել Ուլնուտը, բայց իրենց ձեռքում պահեն հորեղբորորդու երկիրը։ Կայսրն իրեն հատուկ բարությամբ ընդառաջ գնաց նրանց խնդրանքին, տվեց Ապոգանեմի՝ իրենց հորեղբորորդու երկիրը, իսկ ինքը վերցրեց Ուլնուտն իր ամբողջ շրջակայքով։ Այսպիսով, ահա ամբողջ Տարոն երկիրը երկու մասի բաժանվեց, նրա մեկ մասը գտնվում էր մագիստրոս Կրիկորիկի որդիների ձեռքում, իսկ մյուս կեսը՝ նրանց հորեղբորորդիների՝ պատրիկ Ապոգանեմի [որդիների]»[28]։ Այս հաղորդումից կարելի է հետևյալ եզրակացություններն անել.

1. Վերջին նախադասությունից հետևում է, որ Ապոգանեմը նաև այլ որդիներ ուներ։

2. Ըստ կտակի, Թոռնիկի երկիրը անցնում էր կայսրությանը, սակայն Կրինիտեսը առաջին անգամ տերիտորիա չի նվաճում։

---

26 Ջենքինսը, ամենայն հավանականությամբ հիմնվելով Ծիրանածինի մի հաղորդման վրա (D. A. I., 50. 115, 126—128), նշում է, որ մոտ 900 թ. կայսր Լևոնը հիմնադրեց Միջագետք թեմը, և դրանով իսկ կայսրության սահմանները բավականին մոտեցան Տարոնին (Constantine Porphyrogenitus, De Administrando Imperio, vol. 2, ed. by R. J. H. Jenkins, London, 1962, էջ 159)։

27 Երանք այս ժամանակամիջոցում ավելի ակտիվանալով պետք է տիրացած լինեին Տարոնի արևելյան մասին։

28 Կոստանդին Ծիրանածին, էջ 9—10։ D. A. I., 43. 172—188։

3. Կրինիտեսը երկրորդ անգամ է գալիս Թոռնիկի երկրին տիրելու։

4. Ուլնուտին (Եղնուտին) իր շրջակայքով, այսինքն՝ Արշամունիքին, տիրում էին Բագրատը և Աշոտը, ուրեմն այն ևս Գրիգոր Տարոնացու ժառանգությունն էր կազմում։

5. Եղնուտը կայսրությանը զիջեցին Գրիգոր Տարոնացու որդիները, որպեսզի փոխարենը իրենց ձեռքում պահեն Թոռնիկի երկիրը։

6. Դրա հիմնական մասը մնում էր Ապոգանեմի մյուս որդիների ձեռքում։

7. Տարոնը բաժանված էր երկու մասի։

Ի՞նչ է մեզ հայտնի այդ նույն տասնամյակներում Տարոնի և Սասունի Թոռնիկյանների մասին։ 936 և 940 թթ. արաբական աղբյուրները հիշատակում են «իբն Թոռնիկին»[29]։ Իբն ալ-Ազրակի հաղորդման համաձայն Սայֆ ալ-Դաուլան, մինչ Կողոնիայի վրա արշավելը, Տարոնի Աշոտից (Բագրատի եղբորից) 939 թ. խլեց «Ալ-Սանասունա երկիրը, որը նվաճեց և տիրեց Կուլբ ամրոցին և Սուլայման բերդին իրենց շրջակայքով»[30]։ Սայֆ ալ-Դաուլան 940 թ. գարնանը Արզանից գալիս է Խլաթ, իսկ այնտեղից ներխուժում է «իբն-Թոռնիկի» երկիրը՝ հարձակվում Մուշ քաղաքի վրա և ավերում է մի եկեղեցի, որը պաշտելի էր տեղացիների համար[31], այնուհետև արշավում է Կողոնիայի վրա։

3. Մարկվարտը նշում է, որ «իբն-Թոռնիկը» նույն ինքը Գրիգորի որդի Աշոտն էր[32]։ Ադոնցը հարց է տալիս. արդյո՞ք Ապոգանեմի որդի Թոռնիկը Տարոնում մի որդի չուներ, որի մասին Ծիրանածինը չի խոսում։ Իսկ այնուհետև հավանական է համարում, որ «իբն-Թոռնիկը» նույն ինքը Բագրատն էր՝ Գրիգորի մյուս որդին[33]։ Գիտնականների այս կարծիքները վերոհիշյալ բոլոր անձանց Բագրատունի համարելու արգասիք են։

Աղբյուրներից երևում է, որ Սայֆ ալ-Դաուլան, սկզբում կարճ ժամանակով, նվաճել է Աշոտի տիրույթի մի մասը, իսկ ապա արշավել է «իբն-Թոռնիկի» երկրի վրա։ Ուրեմն Աշոտը և «իբն-Թոռնիկը» տարբեր անձինք և, թերևս, ժամանակակիցներ էին։ Սակայն եթե ընդունենք, որ «իբն-Թոռնիկը» դա նույն ինքը Բագրատն է, կստացվի, որ Սայֆ ալ-Դաուլան նախ հարձակվեց Աշոտի, իսկ ապա՝ Բագրատի տիրույթների վրա։ Այս դեպքում ի՞նչ եղավ «Թոռնիկի երկիրը»։ Չէ՞ որ Ծիրանածինի հաղորդումից հետևում է, որ Տարոնի մյուս մասը Ապոգանեմի ժառանգների ձեռքում էր[34]։ Իսկ Ծիրանածինից իմացանք նաև, որ Գրիգոր Տարոնացու որդիները երկուսով, իսկ Բագրատի մահից հետո[35] Աշոտը, միևնույն տերիտորիայի՝ իրենց հոր թողած

---

29 J. Markwart, նշվ. աշխ., էջ 463։ N. Adontz, նշվ. աշխ., էջ 230։

30 Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 153։

31 J. Markwart, նշվ. աշխ., էջ 463։ N. Adontz, նշվ. աշխ., էջ 230։

32 J. Markwart, նույն տեղում։

33 N. Adontz, նշվ. աշխ., էջ 231։

34 Հմմտ. D. A. I., vol. 2, էջ 166։

35 Ջենքինսը ենթադրում է, որ Բագրատը պետք է մահացած լիներ մոտ 935 թ.։ Նա նրան չի նույնացնում «իբն-Թոռնիկի» հետ (D. A. I., vol. 2, էջ 166)։ Բագրատին, ըստ ժառանգության կարգի, կարող էր հաջորդել իր որդին, մանավանդ որ Աշոտը Գրիգորի խորթ որդին էր։ Սակայն Բագրատի որդին՝ Ռոմանոսը (Մ. Չամչյան, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 818, N. Adontz, նշվ. աշխ., էջ 243), ըստ երևույթին, անչափահաս էր և Բագրատին հաջոր-

ժառանգության վրա էին իշխում։ Այսպիսով, այս ժամանակ Տարոնի Բագրատունիների տիրույթների սահմանը հարավում անցնում էր Սանասունքի արևմտյան մասով[36], հյուսիսում՝ Արշամունիք գավառով, որը զիջվել էր կայսրությանը։ Իսկ Տարոնի մնացած մասը և Սասունը գտնվում էին Մամիկոնյաններ-Թոռնիկյանների ձեռքում, ի դեմս «իբն-Թոռնիկի»։ Այս խառը ժամանակաշրջանում, երբ Սայֆ ալ-Դաուլան Կողոնիայից վերադառնալով զբաղված էր այլ տեղերում[37], Աշոտը կարող էր Մամիկոնյան-Թոռնիկյաններից գրավել Մուշ քաղաքը։ Ապոգանեմի հետ կապված անցքերը տեղի են ունենում Ռոմանոս I Լեկապենոսի գահակալությունից (920—944 թթ.) տարիներ առաջ[38]։ Ա. Կաժդանը գրում է, որ Ապոգանեմը տեղափոխվեց Բյուզանդիա և այնտեղ ստացավ պրոտոսպաթարի կոչում դեռևս X դարի առաջին կեսին, և որ միայն գուշակել կարելի է, թե արդյո՞ք նա կամ նրա ազգականներից մեկը բյուզանդացիների օգնությամբ չէր նշանակվել Մուշ քաղաքի կառավարիչ 936 թ.[39]։ Թեև Ապոգանեմի մասին արված այս դատողությունները Ծիրանածինի հաղորդածի համեմատ փաստական տեսակետից թերի են, և Ա. Կաժդանը նույնպես նրան ու նրա ժառանգներին Բագրատունի է համարում, սակայն այն ճշմարտությունն են պարունակում, որ Բյուզանդիայի շնորհիվ էր, որ Ապոգանեմը և նրա ժառանգները Տարոնի քաղաքական ասպարեզում սկսում են զգալի դեր խաղալ, իսկ այդ, ըստ Ծիրանածինի հաղորդումների, պետք է տեղի ունենար X դարի սկզբներից։

Ադոնցը Ծիրանածինից գիտի, որ Ապոգանեմը նաև այլ որդիներ է ունեցել[40], սակայն նա այդ հարցի վրա չի ծանրանում, այլ նշում է, որ Աշոտը և Բագրատը Թոռնիկի ժառանգության փոխարեն կայսրությանը առաջարկում

դում է Աշոտը։ Իսկ Ռոմանոսը այդ ժամանակ, ամենայն հավանականությամբ, մոր հետ գտնվում էր Եկեղյաց գավառում, քանի որ Բագրատը իր կենդանության օրոք «խնդրեց կայսեր, որ իրեն տրվի Գրիգորասի պրոաստիոնը, որպեսզի այնտեղ բնակվի պատրիկիան. իր կինը» (D. A. I., 43. 158—160, Կոստանդին Ծիրանածին, էջ 9)։

36 Բագրատը և Աշոտը Թոռնիկի բաժնից կարճ ժամանակով կարող էին ձեռք գցած լինել միայն Սանասունքի արևմտյան մասը, որը այնուհետև, նույնպես կարճ ժամանակով, նվաճել էր Սայֆ ալ-Դաուլան։

37 А. А. Васильев, Византия и арабы, СПб., 1902, էջ 245 և հտ.։

38 Կոստանդին Ծիրանածին, էջ 6—7, D. A. I., 43. 54—60, 72—79։

39 А. П. Каждан, Армяне в составе господствующего класса Византийской империи в XI—XII вв., Ереван, 1975, էջ 47։ D. A. I., vol. 2, էջ 166։ Սակայն Ծիրանածինի նշած Թոռնիկի որդին իշխան դառնալ (D. A. I., նույն տեղում) չէր կարող, քանի որ նա անչափահաս էր (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1977, № 10, էջ 68)։

40 Մ. Չամչյանը առանց աղբյուրը նշելու գրում է, որ Տարոնի «միոյ մասին իշխէին որդիք նորա (Գրիգոր Տարոնացու—Է. Դ.) Բագարատ և Աշոտ. և միւսումն եղբօր որդիք նորա Թոռնիկ, Վահան և Սմբատ՝ ընդ տերութեամբ կայսեր...»։ Թոռնիկի մահից հետո «եկին ընտանիք Թոռնկայ և եղբայր նորին Սմբատ ի Կոստանդնուպոլիս, և անդ բնակեցան. իսկ միւս եղբայր նորա Վահան անուն մնաց ի Տարոն մինչև ի վախճան կենաց իւրոյ» (Մ. Չամչյան, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 817—818)։ Հ. Աճառյանը այս մասին հղում է անում Չամչյանի նշված հաղորդումների վրա (Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, հատ. Ե, 1962, Երևան, էջ 17)։ Կարելի է տեսնել, որ Չամչյանը նույնպես (ինչպես հետագա բոլոր հետազոտողները) ուղղակի նշում է, որ Գրիգորը և Ապոգանեմը եղբայրներ էին, առանց տարաբաժանելու առաջինի Բագրատունի, իսկ երկրորդի Մամիկոնյան լինելը։

են եղնուտը[41], որպեսզի իրենց ձեռքում պահեն ամբողջ Տարոնը[42]։ Այնինչ Ապոգանեմի որդիների մասին Ծիրանածինի հաղորդած փաստից առնվազն կարելի է եզրակացնել, որ նրան հայտնի էր Թոռնիկից հետո այլ ժառանգների գոյությունը վերջինիս տիրույթում։

Անհրաժեշտ է նշել, որ ճիշտ է Չամչյանի կարծիքը, թե Թոռնիկը Ապոգանեմի առաջին ամուսնությունից էր[43]։ Նման եզրակացության կարելի է գալ Ծիրանածինի հետևյալ հաղորդումից. «Ապոգանեմը նորից գնաց երանելի կայսեր (Լևոն VI—Է. Դ.) մոտ և նրա կողմից բարձրացավ պատրիկի աստիճանին։ Նա իրավունք ստացավ կնության առնել վերոհիշյալ Կոստանդինի դստեր, և այդ առթիվ խնդրեց նաև տուն և ստացավ «Բարբարոսի տունը»՝ առանց խրիսովուլի»[44]։ Ապա Ծիրանածինը շարունակում է. «...այնուհետև գնաց իր երկիրը, վերադառնալու և ամուսնական հանդես կատարելու մտադրությամբ»[45], որից հետո ավարտում է. «Բայց իր հայրենի երկիրը վերադառնալուց մի քանի օր հետո վախճանվեց»[46]։ Քանի որ Ապոգանեմը Տարոն հասնելուց մի քանի օր հետո մահացավ, ուրեմն նա չհասցրեց ամուսնանալ Կոստանդինի դստեր հետ։ Այս ծրագրվող, սակայն չկայացած ամուսնությունը կարող է դասվել այն ամուսնությունների շարքը, որոնք ևս կազմում էին կայսրության նվաճողական քաղաքականության մի մասը։ Այդ երևում է նաև Գրիգորիկի որդու՝ Բագրատի թողած կտակից, որը նա գրել էր բյուզանդական մագիստրոս Թեոփիլակտոսի քրոջ հետ ամուսնանալուց հետո։ Սակայն Բագրատի կտակը ուժի մեջ չէր մտնում, քանի որ իր երեխան անչափահաս էր և կենդանի էր եղբայրը՝ Աշոտը։ Ապոգանեմի մահվան հետևանքը եղավ նաև այն, որ խրիսովուլով չվավերացվեց «Բարբարոսի տան» անցումը իր ընտանիքին։ «Բարբարոսի տունը» կայսրության քաղաքական ծրագրերի մեջ նույնպես կարևոր գործոն էր, որի նշանակությունը հստակ ձևակերպել է ինքը՝ Ծիրանածինը. Գրիգորիկին, որը նոր էր հպատակվել կայսրությանը, Լևոն VI-ի կողմից «Բարբարոսի տունը» հանձնելու քայլը «արևելքի մյուս իշխանավորներին էլ կդրդի նույն պատրաստակամությամբ հպատակվելու հռոմեացիներին»[47]։

Թոռնիկի մահից հետո, ըստ երևույթին, հետևյալն էր տեղի ունեցել։ Առաջին անգամ Տարոն գալով, Կրինիտեսը չի կարողանում Թոռնիկի կտակի

---

41 Հակառակ կարծիք է հայտնել Ա. Տեր-Ղևոնդյանը (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, Երևան, 1976, էջ 35)։

42 N. Adontz, նշվ. աշխ., էջ 220։ Հմմտ. J. Markwart, նշվ. աշխ., էջ 461—462։ E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches, Bruxelles, 1935, էջ 148։

43 Մ. Չամչյանը առանց աղբյուրը նշելու գրում է. «Դնացեալ (Ապոգանեմը—Է. Դ.) ի Տարոն՝ մեռաւ անդ, թողեալ զերիս որդիս յառաջին ամուսնոյն—զԹոռնիկ, զՎահան, և զՍմբատ» (էջ 726)։ Այն, որ Թոռնիկի մայրը մինչ այս դեպքերը արդեն մահացել էր, երևում է Ծիրանածինի նաև հաջորդ շարադրանքից, որտեղից իմանում ենք, որ իր հոր մահից հետո Թոռնիկը որբ էր մնացել (Կոստանդին Ծիրանածին, էջ 7, D. A. I., 43. 103)։ Հմմտ. N. Adontz, նշվ. աշխ., էջ 252։

44 Կոստանդին Ծիրանածին, էջ 6։ D. A. I., 43. 72—76.

45 „τῷ τότε μὲν πρὸς τὴν ἰδίαν χώραν ὑπέστρεψεν πρὸς τὸ παλὶν εἰσελθεῖν καὶ τὰ τοῦ γάμου ἀπαρτισασθαι“ (D. A. I., 43. 77—78)։

46 Կոստանդին Ծիրանածին, էջ 6։ D. A. I., 43. 78—79.

47 Կոստանդին Ծիրանածին, էջ 7։

համաձայն տիրել նրա բաժնին, քանի որ կային այլ ժառանգներ։ Երկրորդ անգամ գալով, կայսեր հրահանգի համաձայն նվաճում է այն, ինչը ավելի դյուրին էր նվաճել՝ Եղնուտը[48], քանի որ Բյուզանդիան արդեն մոտեցել էր Արշամունիքին, իսկ Աշոտին և Բագրատին կայսրը «ընդառաջում» և «տալիս» էր այն, ինչին ինքը չէր տիրացել՝ Ապոգանեմի ժառանգությունը, որից, սակայն, միայն Սանասունքի արևմտյան մասը կարող էր նրանց անցած լինել։ Կայսրության այս քայլը շատ նման էր 976—979 թթ. դեպքերի կապակցությամբ Դավիթ Կյուրապաղատին Հարքը և Ապահունիքը խոստանալուն։ Իսկ Եղնուտին[49] կայսրությունը փաստորեն տիրացավ բռնի ձևով։

Ինչո՞ւ ենք կարծում, որ Արշամունիքը 939 թ. արդեն պետք է բյուզանդացիների ձեռքում լիներ։ Երբ 939 թ. Սայֆ ալ-Դաուլան ուղղվեց դեպի Կարին քաղաքը, բյուզանդացիները, իմանալով այդ, ավերեցին Հավճիշը և փախուստի դիմեցին, իսկ ինքը վերադարձավ Աղձնիքի Արղան քաղաքը[50]։

Թեև X դարի առաջին տասնամյակներում բյուզանդացիները որոշ հաջողությամբ մի քանի արշավանքներ էին ձեռնարկել Կարինի և Բասենի ուղղությամբ, նույնիսկ հասնելով մինչև Դվին, սակայն որոշակի տարածքի չէին տիրացել[51], իսկ արաբներից աղատված շրջաններն էլ անցնում էին տեղացիների ձեռքը, այնպես որ կայսրությունը Կարինը գրավելու նպատակով ցանկանում էր տիրանալ Կեց և Մաղդատ ամրոցներին[52]։ Եթե 939 թ. բյուզանդացիները հասել և հաստատվել էին Երասխի արմունկի շրջանում, որտեղ գտնվում էր Հավճիշը, ապա կարծում ենք, որ նրանց այդ առաջխաղացումը կարող էր տեղի ունենալ ոչ թե Կարինի վրայով անցնող ճանապարհով, այլ Մելիտենեի, որը գրավվել է 934 թ.։ Ուրեմն Արշամունիքը նրանց պետք է անցներ 934 և 939 թթ. միջև, որով կայսրությունը ավելի էր մոտենում նաև կայսիկների տիրույթին[53]։ Հավճիշից բյուզանդացիները կարող էին փախչել Արշամունիքի Եղանց բերդը (բյուզ. Ὀλνουτής, հայկ. Օղնուտ-Եղնուտ) Թաթոս—Ջերմուկ—Գինեկ ճանապարհով[54]։ Այսպիսով, քանի որ Եղնուտի հարցը այս ժամանակ է բարձրանում, կարծում ենք նաև, որ Թոռնիկը պետք է մահացած լիներ 930-ական թթ. սկզբներին, քանի որ 936 թ. հանդես է գալիս մեկ այլ Մամիկոնյան-Թոռնիկյան։ Ճանաչելով Թոռնիկին կամ ընդհանրա-

---

48 Հետագայում Տրապիզոնի թեմի ցուցակում հիշատակվում է „ὁ τῆς Ὀλνουτής" եպիսկոպոսությունը (E. Honigmann, սշվ. աշխ., էջ 196)։

49 Եղած փաստերը վկայում են, որ խոսքը վերաբերում է ոչ թե Մուշից քիչ հյուսիս-արևվելք, այլ Արշամունիքում գտնվող Եղնուտին։

50 Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 151։

51 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1977, № 2, էջ 74—79։

52 Տե՛ս մեր՝ Կեց (Κετζέον) և Մաղդատ (Μαστάτον) ամրոցների տեղադրությունը, նույն տեղում, 1976, № 8, էջ 73—84։

53 Արաբա-բյուզանդական հակամարտության այս փուլում X դարի 20-ական թթ. վերջերից միայն կայսրությանը հաջողվում է իր ազդեցությունը որոշ չափով տարածել Վանա լճից հյուսիս ընկած տերիտորիայի վրա, իսկ մինչ այդ, Աշոտ I Բագրատունուց սկսած, դրանց վրա ունեցած սյուզերենական իրավունքները կայսրությունը հաստատում էր այն սկզբունքով, ըստ որի՝ իր վասալի վասալը իր վասալն էր («Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 1, էջ 154 և 164)։

54 Տե՛ս մեր՝ Վասիլ Բ-ի արևելյան արշավանքի երթուղին և նպատակը. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1973, № 10, էջ 65 և 69։

պես Մամիկոնյաններ-Թոռնիկյաններին, աղբյուրները կարող էին նրանցից մեկին (որը ժառանգել էր այդ տան տիրույթները) «իբն-Թոռնիկ» անվանել։

Այսպիսով, մինչև 940 թ. Թոռնիկին հաջորդել էր Մամիկոնյաններ-Թոռնիկյանների տոհմից մի այլ անձնավորություն։ Վերջիններս, բացի Սասունի դգալի մասից, տիրում էին նաև Մուշից արևելք ընկած Տարոնի մնացած մասին, իսկ ապա նաև ամբողջ Սասունին, մինչ այդ թվականը մի առ ժամանակ իրենց ձեռքում պահելով նաև Մուշը։ Ինչպես տեսնում ենք, Գրիգորի որդի Աշոտի համար արդեն ծանր վիճակ էր ստեղծվել. արևմուտքից և հյուսիսից կայսրությունն էր ճնշում, իսկ արևելքից՝ Մամիկոնյաններ-Թոռնիկյաններն էին։ Նրա տիրույթների հարավային սահմանը նույնպես հանգիստ չէր։ Եվ բնական էր, որ ֆեոդալական իշխանական տունը, կորցնելով իր գոյության համար անհրաժեշտ ռազմա-տնտեսական պոտենցիալը, այլևս ի վիճակի չէր գոյատևելու և Աշոտի մահից հետո նրա տիրույթները անցան կայսրությանը, ինչպես հաղորդում է Ասողիկը. «Եւ ապա ի Նժե թուականին խաւարեցաւ արեգակն. և վախճանեցաւ Տարօնոյ իշխանն Աշոտ։ Եւ Տարօնոյ Հոռոմք տիրեցին»[55]։ Դրան համահնչյուն է Կեդրենոսի այն հաղորդումը, որ Գրիգորը և Բագրատը (Աշոտի որդիները) Տարոնը հանձնեցին կայսրությանը, փոխարենը ստանալով պատրիկոսի կոչում և արգավանդ հողեր[56], հեռացան երկրից կայսրության խորքերը՝ հետագայում մասնակցելով Վարդ Սկլերոսի ապստամբությանը։ Այսպիսով, ինչպես ցույց են տալիս փաստերը, Տարոնի անցումը Բյուզանդիային միանգամից չի եղել և ոչ էլ ամբողջապես։

Տարոնի Բագրատունիների՝ 966/7 թթ. քաղաքական ասպարեզից հեռանալուց հետո Թոռնիկյանները, տեսնելով իրենց սպառնացող նույն վտանգը, բնական է, որ ձգտում էին Անի—Շիրակի Բագրատունիների հովանավորության տակ անցնել։ Նման հարաբերությունների ենք հանդիպում Չմշկիկի արշավանքի ժամանակ։

Բյուզանդական կայսր Հովհաննես Չմշկիկը (969—976 թթ.) 974 թ. Ամիդի և Հյուսիսային Միջագետքի վրա՝ արաբների դեմ արշավելիս «կամեցաւ զմուտն յաշխարհն Հայոց առնել»[57]։ Աշոտ III Բագրատունին (954—977) Չմշկիկի Հայաստան գալու լուրը ստանալով, բոլոր հիմքերը ուներ անհանգստանալու, քանի որ թարմ էր Վարդի ավերիչ արշավանքը Մանազկերտի վրա, և, ընդհանրապես, նրա համար ակնհայտ էին Բյուզանդիայի նվաճողական ծրագրերը, որոնց իրականացումով կայսրությունը արդեն տիրացել էր Հայաստանի արևմտյան տերիտորիայի դգալի մասին։

Մինչև Չմշկիկի արշավելը Աշոտ III Բագրատունին (Ողորմածը) շտապում է զորք հավաքել երկիրը պաշտպանելու. «Յայնժամ ամենայն թագաւորաղունքն Հայոց՝ ազատքն և իշխանքն և ամենայն մեծամեծքն աշխարհաց Տանն Արեւելից ժողով արարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի. թագաւորն Կապանին Փիլիպպէ և թագաւորն Աղուանից Գուրգէն[58], Աբաս

---

55 Ասողիկ, էջ 183։

56 Cedrenus, II, 375, տե՛ս N. Adontz, նշվ. աշխ., էջ 231։

57 Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 17։

58 Ինչպես նշում է Հ. Բարթիկյանը, խոսքը Լոռիի (Կյուրիկյան) թագավորի մասին է (տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, թարգմ., ներածություն և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Երևան, 1973, էջ 300, ծան. 43).

կարուց տէրն և Սենեքերիմ Վասպուրականիս տէրն և Գուրգէն Անձեւացեաց տէրն և բովանդակ ամենայն տունն Սասանու[59]. և բանակ հարեալ ի Հարքայ գաւառին արք իբրեւ ութսուն հազար»[60]։

Վարդի («Վարդ եղբօրորդի Նիկիփորայ զորու ծանու գայ յԱպահունիս, պաշարէ զՄանազկերտ քաղաք. և առեալ զնա՝ ի հիմանց բրեալ խրամատեաց զպարիսպ նորա»[61]) և Զմշկիկի արշավանքների ժամանակ Հայաստանի այդ մասերը գտնվել են տարբեր քաղաքական պայմաններում։ Վարդը 968 թ. անարգել անցավ Հարքով և Ապահունիքով և ժամանակավորապես գրավեց Մանազկերտը։ Իսկ Զմշկիկի նույնիսկ մինչև Հայաստան գալը, հայոց թագավորը իր զորքով արդեն կանգ էր առել Հարքում։ Այս փաստից երևում է նաև, որ Աշոտ III-ը նշված ժամանակամիջոցում այդ մասերը պետք է մտցրած լիներ Բագրատունյաց Հայաստանի կազմի մեջ։ Այնուհետև Ուռհայեցին գրում է. «Եւ եկեալ հրեշտակ թագաւորին Հոռոմոց առ նոսա և տեսին պատրաստական զամենայն տունն Հայոց ժողովեալ ի մի վայր և երթեալ պատմեցին թագաւորին Զմշկանն»[62]։ Իր հերթին հայոց թագավորը զգուշություն է ցուցաբերում, ուստի և «գնացին և յիշխանացն Հայոց զկնի հրեշտակացն Հոռոմոց՝ իմաստասէրն Լեւոն (Ղևոնդ—Է. Դ.) և Ստատ իշխանն Թոռնեցին[63] և այլ եպիսկոպոսք և վարդապետք և արարին սէր և խաղաղութիւն ընդ թագաւորին Հոռոմոց և ընդ Աշոտայ արքային Հայոց»[64]։ Ամենայն հավանականությամբ, այդ առաջին բանակցություններում կողմերը համաձայնության էին եկել, որ կայսերական զորքերը կանցնեն Արածանիի հովիտով և Սասունով անցնող Մելիտենե—Ամիդ ճանապարհով. և կայսրը հավաստիացրել էր, որ իր արշավանքը Հայաստանին չի վնասի։ Պետք է կարծել, որ Աշոտ III Բագրատունին այնուամենայնիվ վստահ չէր կայսեր խոսքին, ուստի և իր զորքը չհեռացրեց Հարքից։

«Եւ դայր խաղայր թագաւորն Զմշկիկ,— շարունակում է պատմիչը,— ահագին բազմութեամբ և հասանէր ի Տարօն գաւառ Հայոց և իջեալ ի Մուշ առաջի Այծեաց բերդին. և յառաջին գիշերն բազում նեղութիւն կրեաց զօրքն Հոռոմոց ի հետեւակ զօրացն Սասանու»[65]։

Այծեաց բերդը գտնվում էր Մուշ քաղաքից քիչ արևմուտք, Արածանիի հովտից Սասունի վրայով Միջնաղբյուր—Նփրկերտ—Ամիդ տանող ճանապարհի վրա և դրանով իսկ կարևոր ստրատեգիական դիրք էր գրավում[66]։ Ինչպես երևում է Զմշկիկի երթուղուց, կայսրությանը 966/7 թ. անցել էր նաև

---

59 Ինչպես ստորև կտեսնենք, սասունցիների մի մասն էր, որ եկել էր Հարք։ Սասունի և Վասպուրականի զորամասերը, անկասկած, Աշոտ Բագրատունուն էին միացել Հարքում, իսկ մնացած զորամասերը նրա հետ պետք է եկած լիներ Բագրևանդի և Ապահունիքի վրայով։

60 Ուռհայեցի, էջ 17։

61 Ասողիկ, էջ 183։

62 Ուռհայեցի, էջ 17—18։

63 Ստատը (Եվստաթիոս) պետք է Վասպուրականի Թոռնավանից լիներ, ինչպես երևում է «Թոռնեցի» բառից։

64 Ուռհայեցի, էջ 18։

65 Նույն տեղում։

66 Ինչպես ցույց է տվել Ս. Տ. Երեմյանը, Այծեաց բերդը (նախկինում այն կոչվել է Արծուիք) գտնվել է Եզերդուտի վանքի մոտ (տե՛ս Ս. Տ. Երեմյանի «Հայաստանը և հարևան երկրները 855—953 թթ.» քարտեզը, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. III, Երևան, 1977)։

Մուշ քաղաքը, որը, ըստ երևույթին, Գրիգորի որդի Աշոտը ետ էր գրավել Մամիկոնյաններ-Թոռնիկյաններից 940 թ.։ Կարևոր է նաև մի այլ հանգամանք. Զմշկիկը գալիս էր հզոր բանակով, որի մասին սասունցիները պետք է քաջատեղյակ լինեին։ Այնուամենայնիվ, նրանք խիզախում են հարձակվել այդ զորքի վրա։ Ուրեմն նրանք վստահ էին իրենց ուժերի վրա, որը բացատրվում է Աշոտի բանակի ներկայությամբ Տարոնի սահմանի մոտ։ Սակայն Աշոտ III Ողորմածը հնարավորին չափ ձգտում էր պահպանել կայսեր հետ կայացած համաձայնությունը և միջադեպը հարթում է խաղաղ ճանապարհով։ Արդեն իսկ պարզ է այն գոհունակությունը, որով կայսրը ընդունեց հայերի կողմից արված խաղաղասիրական քայլը. «Եկին իշխանքն և վարդապետքն Հայոց առ թագաւորն Հոռոմոց և մատուցանէին առաջի նորա զթուղթն Վահանայ Հայոց կաթուղիկոսին։ Եւ թագաւորն առեալ ընկալաւ զնա և յոյժ մեծարեաց զթուղթն և զբերողն»[67]։

Մ. Օրմանյանը պարզել է, որ Վահան կաթողիկոսը աթոռակալել է 968—969 թթ.[68], իսկ ապա Անիի եկեղեցական ժողովում որոշվում է նրան զրկել կաթողիկոսական աթոռից, որպես քաղկեդոնականությանը հարողի։ Նա հեռանում է Վասպուրական, որտեղ և մահանում է[69]։ Նույնիսկ այս դեպքում Զմշկիկի մոտ գնացած պատվիրակները կարող էին տանել ժամանակին անձամբ Վահանի գրած նամակը, որն իր բովանդակությամբ գոհացնում է կայսեր։

Այն, որ հայ-բյուզանդական հարաբերությունները սասունցիների ելույթի հետևանքով խիստ սրվել էին, իսկ կայսրը այնուհետև կայացած հաշտությանը և համաձայնությանը մեծ տեղ էր տալիս, երևում է մի առ ժամանականց վերոհիշյալ Ղևոնդին Զմշկիկի գրած նամակից. «...յորժամ եկիր առ մեզ ի յԱշոտոյ շահնշահէ և հոգիական զաւակէ մերմէ և դարձուցեր զամենայն սրտմտութիւնս ի նմանէ»[70]։

Հաշտությանը հաջորդում է Աշոտ III-ի և Զմշկիկի միջև կայացած նոր համաձայնությունը. «Եւ հաստատեաց (կայսրը—Է. Դ.) ուխտ սիրոյ ընդ Հայք և խնդրեաց զօրս յԱշոտոյ զալ նմա յօգնականութիւն. և տուեալ Աշոտ զօրս ի տանէ Հայոց վառելոց և այր սպատերազմողս իբրեւ տասն հազար, խնդրեաց կերակուրս, ռոճիկս. և զամենայնն տուեալ նմա Աշոտ։ Եւ զվարդապետն Հայոց զՂեւոնդ, զեպիսկոպոսսն և զիշխանսն մեծաւ պարգեւօք յուղարկեաց առ Աշոտ թագաւորն Հայոց»[71]։

---

67 Ուսհայեցի, էջ 18։

68 Մ. Օրմանյան, Ազգապատում, մասն Ա, Կոստանդնուպոլիս, 1913, էջ 1116—1118։

69 Ս. Զամչյանը նշում է, որ Վահան Սյունեցին նամակը գրել է կայսրին Վասպուրականից։ Զամչյանի (հատ. Բ, էջ 840—841, 845, 1016—1017) և Օրմանյանի տարբեր վերաբերմունքը Վահան կաթողիկոսի հետ կապված անցքերի հանդեպ գուցե բացատրվում է առաջինի՝ կաթոլիկ, իսկ երկրորդի՝ լուսավորչական լինելով։ Մ. Զամչյանը այն կարծիքին է, որ Վահանը կենդանի էր Զմշկիկի Հայաստան գալու ժամանակ և նույնիսկ դրանից հետո էլ։ Սակայն Հայսմավուրքից իմանում ենք, որ նա մահացել է Ստեփանոս կաթողիկոսի մահվան տարին՝ 972 թ. («Յայսմաւուրք», Ռ3, հթ. ի տպարանի Գրիգորի դպրի Մարսբուանեցւոյ, մայիս Իէ)։ Վահան կաթողիկոսի հունասեր լինելուն և նրա նամակին անդրադարձել է նաև Հ. Գրեգուարը (տե՛ս „The Cambridge Medieval History", vol. IV, Cambridge, 1966, էջ 166)։

70 Ուսհայեցի, էջ 28։

71 Նույն տեղում, էջ 18։

Զմշկիկը Աշոտ III Բագրատունուց զորք վերցնելով կարող էր երկու նպատակ հետապնդել։ Անկասկած է, որ կայսրը զորաժողով անելով «առ հասարակ դամենայն աշխարհն արեւմտից»[72], առիթը բաց չի թողնում նաև արեվելյան քրիստոնյա պետությունից օգտվելու։ Բացի այդ, բացառված չէ, որ չնայած կայացած բանակցություններին, անվստահությունը երկուստեք էր, և կայսրը հայոց զորքի մի մասը վերցնելով, նաև ցանկանում էր իր թիկունքը ապահովել։

Զմշկիկը Աշոտ III Ողորմածի ներկայացուցիչների հետ (մինչև Հայաստան գալը և ապա Տարոնում) համաձայնեցրել էր այն ամենը, ինչ անմիջապես առնչվում էր արշավանքին։ Իսկ կայսրության շահերից բխող տերիտորիալ հարցերը, կապված Հայաստանի հետ, նա թողեց վարելու «պռոտօսպաթարին Դերջնայ Լեւոնի և Տարօնոյ զորավարին»։ Այդ իմանում ենք Աշոտ Բագրատունուն Զմշկիկի կողմից ուղղված նամակից, որը նա գրել էր արշավանքից հետո, ինչպես ենթադրում է Գ. Շլյումբերժեն՝ Կոստանդնուպոլիս վերադարձի ճանապարհին[73]։ Այդ նամակը բերում է Ուռհայեցին իր «Ժամանակագրության» մեջ։ Ք. Քուչուկ-Հովհաննիսյանը կարծում է, որ նամակը գրված էր ի պատասխան այն մտահոգության, որ ուներ Աշոտը իր զինվորների և ընդհանրապես ամբողջ արշավի ճակատագրի նկատմամբ[74]։ Մեկ թվում է նաև, որ ամբողջ նամակը կայսեր համար ավելի շուտ պատրվակ էր՝ ցույց տալու իր հզորությունը և, որ կարևորն է, նամակին կցելու այն հատվածը, որում նա Աշոտից պահանջում էր մինչ այդ ուղարկված խրիսովուլը։ Սակայն այդ շարունակությունում տեղ գտած որոշ աղավաղումներ թույլ չեն տվել մի շարք հետազոտողների այդ հատվածը կցել Զմշկիկի՝ Աշոտին ուղղված այն նամակին, որ հրատարակել էին իրենք[75]։ Առաջինը Ադոնցն էր, որը որոշ բնագրային ճշտումներ կատարելուց հետո ցույց տվեց, որ այդ հատվածը կազմում էր Աշոտին ուղղված նամակի շարունակությունը[76]։ Ըստ այսմ, կայսրը, իմանալով, որ Աշոտ III-ը «զԱյծեաց բերդն որպէս յանձին» առնելով չէր հանձնել կայսրությանը, հայոց թագավորին տեղեկացնում էր. «Եւ այժմ գրեցաք առ զօրավարդ մեր, որ ոչ բերդն առնու և ոչ զցորեանն, զոր պայմանեցեր, զի այժմ չեղեւ առ մեզ պէտք. բայց զխոսվուլաւն, զոր յուղարկեցաք, տուր տանել առ զօրավարն մեր, որ առաքէ առ թագաւորութիւնս մեր»[77]։ Իսկ Սմբատ Սպարապետը գրում է. «Գրեաց և ի պռոտօսպաթարն, և ի Տարօնոյ զօրավարն զի առաքեսցեն առ թագաւորն Աշոտ զխրսոյվուլն և դահեկան ԼՌ և ծառայս ԲՌ, ձի ԺՌ և ջորի Ռ վասն սիրոյն և միաբա-

---

72 Նույն տեղում, էջ 17։

73 G. Schlumberger, L'Epopée Byzantine à la fin du dixième siécle, Paris, 1896, էջ 252։

74 Хр. Кучук-Иоаннесов, Письмо Иоанна Цимисхия к Ашоту III, «Византийский временник», т. X, 1903, № 1—2, էջ 91—101։

75 Նույն տեղում։

76 N. Adontz, նշվ. աշխ., էջ 143—145։

77 Ուռհայեցի, էջ 27։ Այն, ինչ Ուռհայեցին մանրամասն բերում է Զմշկիկի վերաբերյալ (էջ 11—28), Ասողիկը շատ համառոտ է նշում (էջ 186—187)։ Ասողիկը չի խոսում Զմշկիկի Հայաստան գալու և այլ մանրամասնությունների մասին։ Տարոնի՝ Բյուզանդիային անցնելու մասին նրա հաղորդումը ևս տերիտորիալ առումով ոչ մի մանրամասնություն չի պարունակում։

նութեան զոր արար նմա»[78]։ Ադոնցը ավելի հավանական է համարում, որ այստեղ աղավաղված է Մատթեոս Ուռհայեցու տեքստը, այլ ոչ թե Սմբատը օգտվել է մեկ այլ աղբյուրից և փորձում է վերականգնել տեքստը Մատթեոս Ուռհայեցու բնագրին համապատասխան[79]։ Մեզ ավելի հավանական է թվում, որ Սմբատ Սպարապետը օգտվել է մեկ այլ աղբյուրից, կամ հենց Ուռհայեցուց, որի մոտ այդ հատվածը այժմ բացակայում է։ Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, ուրեմն Սմբատի մոտ խոսքը այն խրիսովուլի մասին է, որը հետո կայսրը ետ է պահանջում։ Աշոտին ուղղված խոսքերից իմանում ենք այդ խրիսովուլի համառոտ բովանդակությունը։

Ուրեմն հետևյալ պատկերն է ստացվում. Զմշկիկը, հաղթական արշավանքից հետո, ցանկանալով միանգամից լուծել նաև Տարոնի մնացած մասը Բյուզանդիային միացնելու հարցը, Աշոտ III-ին խրիսովուլ է ուղարկում Այծյաց բերդը կայսրությանը հանձնելու մասին։ Այծյաց բերդի մոտ տեղի ունեցած վերոհիշյալ միջադեպից հետո հաշտեցման կետերից մեկը պետք է լիներ բերդի հանձնումը։ Աշոտ III Բագրատունու ցույց տված ռազմական օգնության և պահանջվող բերդի դիմաց, որպես փոխհատուցում, կայսրը ուղարկում էր ռազմավարի մի մասը։ Սակայն Աշոտ III-ը այս անգամ հրաժարվում է տերիտորիալ զիջումներ անելուց և կայսրը, տեսնելով նրա վճռականությունը, երկրորդ նամակով ետ է պահանջում այդ խրիսովուլը։

Ադոնցը ճիշտ է նկատել, որ 966 թ. Տարոնի հարցը մնում էր դեռևս չլուծված[80]։ Ապա նշում է, որ կցումը հայտարարված էր, բայց ռազմագիտական կարևոր մի կետ՝ Այծյաց բերդը, շրջանի զինվորական կառավարչի իշխանությունից դուրս էր[81]։ Քանի որ Այծյաց բերդի տեղադրությունը հայտնի է, ապա դժվար է համաձայնվել, որ այն երկար ժամանակ, կղզիացած ձևով՝ Մշո դաշտի արևմտյան մասում, Սասուն տանող ճանապարհի վրա, մնում էր Աշոտ III Բագրատունու իշխանության տակ։ Ավելի հավանական է կարծել, որ, ինչպես վերը նշեցինք, Տարոնի՝ Այծյաց բերդից արևելք ընկած մասը, ինչպես և Սասունը, մնացել էր Մամիկոնյաններ-Թոռնիկյանների ձեռքում՝ Անի—Շիրակի Բագրատունիների սյուզերենության տակ։

Իսկ այն, որ Աշոտ III Բագրատունու զորքը կանգ էր առել Հարքում, կարելի է բացատրել հետևյալ կերպ։ Մենք հավաստի ենք համարում Թոռնիկի կտակի մասին Ծիրանաձինի հաղորդումը և միայն այլ ժառանգների գոյությունն էր, որ կայսրությանը հնարավորություն չէր տվել տիրանալու Տարոնի այդ մասին ևս։ Սակայն բնական էր նաև Թոռնիկի հետնորդների ցանկությունը՝ անցնել Աշոտ III Բագրատունու սյուզերենության տակ։ Դրանով իսկ Տարոն—Սասունի այդ իշխանական տան վիճակը երկիմաստ էր. փաստորեն, դրա գոյությունը զգալի չափով պայմանավորված էր կայսրության և Հայոց թագավորության միջև եղած ուժերի հարաբերակցությամբ։ Անկախ Բյուզանդիային տրված կտակներից (հիշենք Բագրատինը և Թոռնիկինը), կար ևս մեկ, ավելի զորեղ գործոն՝ ժողովուրդը, որը օրհասական պահին պաշտպան կարող էր լինել իր երկրին։ Դրա օրինակներից էր Զմշկիկի դեմ

78 «Սմբատայ Սպարապետի Տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 12։

79 N. Adontz, նշվ. աշխ., էջ 146։

80 Նույն տեղում, էջ 144։

81 Նույն տեղում, էջ 144։ Ըստ Ադոնցի, այդ ժամանակ ամբողջ Տարոնը, բացի Այծյաց բերդից, գտնվում էր Բյուզանդիայի գերիշխանության տակ։

սասունցիների ելույթը[82]։ Ահա ուժերի հարաբերակցության այս պայմաններում էր, որ Աշոտը չմտավ Տարոն և միայն սասունցիների մի մասն էր, որ ելնելով իրերի իսկական վիճակից, հարձակում գործեց կայսեր զորքի վրա, սակայն Աշոտը շտապեց հարթելու այդ միջադեպը։ Այս տեսակետից պերճախոս են նաև Այծյաց բերդի հարցում Զիմշկիկի անմիջական բանակցությունները Աշոտ Բագրատունու հետ։

Այսպիսով, Ասողիկի հաղորդումը 966/7 թ. Տարոնը Բյուզանդիային անցնելու մասին վերաբերում է միայն Բագրատունի Գրիգոր Տարոնացու որդիների՝ Բագարատի և Աշոտի տիրույթներին, իսկ Մամիկոնյաններ-Թոռնիկյանները, մեր կարծիքով, Սասունից բացի տիրում էին Տարոնի մնացած մասին նաև 976 թ., երբ Բատը արշավեց Մուշի վրա, որից հետո Տարոնը 976—979 թթ. ապստամբական և ապա կայսերական զորքերի արշավանքներին էր ենթարկվել։

Հետաքրքիր է նշել, որ 1000 թ. Վասիլ II կայսրը Արշամունիքի Երիզայում եղած ժամանակ «Հրամայէ զօրացն Զորրորդ Հայոց և Տարօնոյ՝ օգնական լինել նմա (Նփրկերտի ամիրա Աբու Մանսուրին՝ Բատի քեռորդուն—Է. Դ.) յոր պէտս և կոչեսցէ»[83]։ Կարելի է եզրակացնել, որ ամբողջ Տարոնը այդ ժամանակաշրջանում արդեն Բյուզանդիայի գերիշխանության տակ էր[84]։ Բնական է, որ Տարոնի մնացած մասի կցումը տեղի էր ունեցել 990—1000 թթ. միջև, քանի որ հաջորդաբար Մրվանյանները, Դավիթ Կյուրապաղատը, իսկ ապա նաև նրա միջոցով՝ կայսրությունը, տեր դառնալով Ապահունիքին և Հարքին, Տարոնը կտրեցին Բագրատունյաց Հայաստանից։ Սակայն Սասունը չմիացվեց կայսրությանը[85]։ Եվ հետաքրքիրն այն է, որ չնայած թվում էր, թե Վասպուրականի Արծրունիները բոլոր ջանքերը գործադրեցին Բագրատունիներից անկախանալու և նույնիսկ առանձին թագավորություն ստեղծեցին, սակայն Բյուզանդիայի առաջխաղացման հետևանքով, հյուսիսից և արևմուտ-

---

82 Այդ պայքարի դրվագները արտացոլվել են «Սասունցի Դավիթ» էպոսում։

83 Ասողիկ, էջ 276։

84 Տարոնի մնացած մասի անցումը կայսրությանը, ինչպես նշել ենք, պետք է տեղի ունենար Զորտվանել մագիստրոսի 990 թ. ապստամբության (որին պետք է միացած լիներ նաև Տարոնի Թոռնիկյանները) ճնշումից հետո (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1977, № 10, էջ 67 և 71)։ Ն. Ակինյանը հավանական է համարում, որ այս Զորտվանել մագիստրոսը Տայքի Թոռնիկյանների ճյուղին պատկանող Հովհաննես-Թոռնիկի եղբոր՝ Հովհաննես-Վարազվաչեի որդիներից մեկն էր («Հանգես ամսօրյա», 1934, մարտ-ապրիլ, էջ 107—108, նաև՝ Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, հատ. Դ, էջ 56, 58, 67, որին հետևել ենք մեր վերոհիշյալ հոդվածում)։ Չնայած Ադոնցը ծանոթ է եղել Ակինյանի աշխատությանը, սակայն չի անդրադարձել նրա այս կարծիքին և փորձել է ապացուցել, որ նշված Զորտվանել մագիստրոսը Հովհաննես-Թոռնիկի մյուս եղբոր՝ Բագրատի որդին էր (N. Adontz, նշվ. աշխ., էջ 233, 314—318)։ Անկախ այն բանից, թե նշված կարծիքներից որը ավելի լավ քննություն կբռնի, պարզ է, որ Տայքի և Դերջանի Թոռնիկյանները, չնայած Բյուզանդիայի քաղաքական և հոգևոր ոլորտում գտնվելուն, առիթը բաց չէին թողնում դուրս գալու կայսրության դեմ և, ի տարբերություն Հովհաննես-Թոռնիկի, որը Վարդ Սկլերոսի ապստամբությունը ճնշողների մեջ էր, նրա եղբորորդի Զորտվանել մագիստրոսը, այլ իշխանների հետ, հարում է Վարդ Փոկասի ապստամբությանը։

85 Գ. Լիտավրինը իրավացիորեն նշում է. «Мы считаем более правыми тех, кто считает аннексию Византией соседних с нею устойчивых и независимых государств одной из причин, ослабивших безопасность византийских границ» (Г. Г. Литаврин, Византийское общество и государство в X—XI вв., М., 1977, էջ 172)։

քից անջատված լինելով Հայաստանի մյուս շրջաններից, իսկ հարավից կրելով սելջուկյան հրոսակախմբերի հարվածները, երկու տասնամյակ անց ստիպված եղան իրենց երկիրը «կտակել» կայսրությանը։

Այսպիսով, Տարոնին տիրելը կայսրության նվաճողական ծրագրերի հիմնական փուլերից մեկի ավարտը հանդիսացավ, որով ընդարձակվեցին նրա սահմանները, սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, չամրապնդվեցին Բյուզանդիայի դիրքերը Արևելքում։

ТАРОН В АРМЯНО-ВИЗАНТИЙСКИХ ОТНОШЕНИЯХ

(вторая пол. IX—X вв.)

Э. Л. ДАНИЕЛЯН

(Резюме)

Ввиду своего важного военно-стратегического положения область Тарон находилась в центре внимания захватнической политики Византийской империи на Востоке. В первом десятилетии IX в. Тароном завладели Багратиды, представители одной ветви которых со временем основали в Византии семью «Таронитов». Со второй половины IX в. в восточной части Тарона постепенно активизируются те из его бывших владетелей—Мамиконянов-Торникянов, которые смогли уцелеть в Сасуне. Центробежность другой ветви таронских Багратидов, а также постепенно обостряющиеся при вмешательстве империи феодальные распри внутри области между этими двумя княжескими домами способствовали аннексии Тарона по частям империей. В 30-х гг. X в. Византия завладела сопредельным с Тароном Аршамуником, также бывшим владением таронских Багратидов, а в 966/7 г.—остальной частью их наследственных владений в западном Тароне. Восточная часть Тарона вместе с Сасуном оставалась в руках местных Мамиконянов-Торникянов под сюзеренитетом резидировавшей в Ани царской династии армянских Багратидов.

Выясняется, что в 975 г. император Иоанн Цимисхий (969—976), кроме похода на Амиду, имел целью также завоевание остальной части Тарона. Однако империи удалось осуществить это, по-видимому, лишь при Василии Болгаробойце (975—1025), после подавления восстания Варда Фоки и его соучастников.

Аннексия Тарона расширила границы Византийской империи, однако не укрепила ее позиций на Востоке.